# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լերմոնտովո համայնք, հասցե գ.Լերմոնտովո,

հեռախոս (0322)68570, էլ. փոստ <lermontovogjuxapetaran@mail.ru>

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 30 » մարտի 2012 թվականի N 12 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Համայնքային ծառայության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով և 10-րդ հոդվածի 3-րդ մասով, "Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման նախարարի 16.03.2012թ. "Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի մի շարք հրամաններում փոփոխություններ կատարելու մասին" թիվ 39-Ա հրամանի 2-րդ մասի պահանջները՝

*որոշում եմ.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովոյի գյուղապետարանի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը՝ համաձայն հավելված 1 – 3 :

2. Ուժը կորցրած ճանաչել Լերմոնտովո գյուղական համայնքի ղեկավարի 2009թ. թիվ 3-Ա, 2011թ. թիվ 36-Ա որոշումները;

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է.ՉԱԽԱԼՅԱՆ

2012 թ. մարտի 30
գ.Լերմոնտովո

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

---

« 04 » ապրիլի 2012 թ.

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 13 -Ն

## ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2012թ. ՓՈՓՈԽՎԱԾ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն "ՀՀ բյուջետային համակարգի մասին" օրենքի 33 հոդվածի և առաջնորդնելով Լերմոնտովո համայնքի 2012 թ-ի փոփոխված բյուջեն հաստատելու մասին Ավագանու 04.04.2012 թ-ի « Լերմոնտովո համայնքի 2012թ-ի փոփոխված բյուջեն հաստատելու մասին» թիվ 8-Ն Որոշմամբ.

1. Հաստատել համայնքի 2012 թ-ի փոփոխված բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը:
2. Հաստատել համայնքի ենթակայության բյուջետային հիմնարկների 2012թ-ի ծախսերի նախահաշիվները ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների:

Համայնքի ղեկավար` Է.Զախալյան